ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ ԸՍՏ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ԼԵՎՈՆ ՇԱՀԻՆՅԱՆ

Հայ Արշակունիների թագավորական հարստության հիմնադրի վերաբերյալ սկզբնաղբյուրներում կան երկու արտաքուստ հակասական տեղեկություններ։ Դրանցից մեկը ավանդել է պատմահայր Մովսես Խորենացին, որին հետևել են հետագա հայ բոլոր մատենագիրները, իսկ մյուսը՝ Սեբեոսի «Պատմությամբ» մեզ հասած, այսպես կոչված, առաջին դպրության կամ Մար-Աբասից քաղվածքներ կատարած Անանուն հեղինակը։

Խորենացու վկայությամբ *Հայաստանում Արշակունիների թագավորական հարստության հիմնադիրն է* Վաղարշակը՝ *Պարթև երրորդ գահակալ* Արշակ Մեծի եղբայրը, *իսկ ըստ* Անանունի՝ Պարթև Արշակ[1] թագավորի որդի Արշակ Փոքրը։ *Այսպիսով, թվում է, որ հայ Արշակունիների թագավորական հարստության հիմնադրի հարցում Անանունը և Խորենացին իրար հակասում են.* մեկի մոտ հիմնադիրը Արշակ Փոքրն է՝ Արշակ թագավորի որդին, մյուսի մոտ Վաղարշակը՝ Արշակ Մեծի եղբայրը։

Այս հանգամանքը վաղուց ի վեր ուշադրություն է գրավել։ Զանազան առիթներով դրան անդրադարձել են հայ և օտարազգի շատ հայագետներ (Մ. Էմին, Պ. Ֆեթթեր, Ն. Մառ, Ստ. Մալխասյան, Ն. Ադոնց, Բ. Սարգիսյան և ուրիշներ)[2]։ Սակայն նրանք դա որակել են իբրև անհաշտելի հակասություն,

---

[1] *Անանունի ներկա շարադրանքից արտաքուստ երևում է, թե Արշակ Փոքրին թագավորեցրել է Պարթև առաջին գահակալը (օրինակ, այդպես է հասկացել Ստ. Մալխասյանը, «Սեբեոսի պատմութիւնը և Մ. Խորենացի», Թիֆլիս, 1899, էջ 43), որին նա Արշակ Մեծ է անվանում, Խորենացու Արշակ Քաջի փոխարեն։ Մինչդեռ, նույն հեղինակի ժամանակագրական տվյալներից հետևում է, որ Արշակ Փոքրին կարող էր թագավորեցնել Պարթև երրորդ գահակալը, ինչպես Խորենացու մոտ է։*

Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան հատվածի (գիրք Բ, գլ. Բ) շարադրանքը՝ մի կողմից, մյուս կողմից էլ Անանունի մոտ բացահայտ նկատվող այս ներքին հակասությունը բավարար հիմք է մտածելու, որ վերջինիս մոտ՝ սկսած այնտեղից, ուր նա պատմում է սելևկյան թագավորներ Դեմետրիոսի և սրա եղբայր Անտիոքոսի (Սիդեացու—Լ. Շ.) դեմ մղվող պատերազմների մասին (այն է՝ մ. թ. ա. II դ. երկրորդ կեսի դեպքեր, որոնք առաջին գահակալ Արշակից ավելի քան 100—110 տարի հետո են կատարվել), վերաբերում են նրա թոռ՝ երրորդ գահակալ Արշակին, ինչպես դարձյալ Խորենացու մոտ է։ Հետևվարար, Անանունի մոտ նկատվող այդ հակասությունը պետք է հետևանք համարել նրա շարադրանքի խաթարված լինելու, որի պատճառով առաջին և երրորդ նույնանուն գահակալների գործերը իրար են ձուլվել և թվում է, թե մեկի մասին է խոսքը։

[2] М. Хоренский, История Армении, перевод Н. О. Эмина. М., 1858, прилож. 132, *«Հայկական աշխատասիրութիւնք հայագետ Պ. Ֆեթթէրի», Վիեննա, 1895, էջ 23, 39, 41, 45,* Н. Марр, Хитон Господень, СПб., 1897, *էջ 086, 282, ծան. 1, «Հանդէս ամսօրեայ», 1895, էջ 297—299 և էջ 299-ի ծան. 1, Ստ. Մալխասյան, Սեբեոսի պատմութիւնը և Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 43,* Н. Адонц, Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста

հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձրել և բացատրելու որևէ փորձ չեն կատարել։

Եվ, իրոք, երկու հեղինակների միջև հակասությունն այս հարցում խիստ ակնբախ է, եթե, իհարկե, նկատի չունենանք որոշ շատ կարևոր պարագաներ, որոնց քիչ հետո կանդրադառնանք և եթե կարևորություն չտանք Արշակ Փոքրի մասին Անանունի երկրորդ հաղորդմանը, ինչպես վարվել են անցյալում։

Բանն այն է, որ Անանունը նույն կլխում Արշակ Փոքրին հիշատակել է երկու անգամ։ Նախ՝ պարթևա-սելևկյան պատերազմները և Անտիոքոսի (Սիդեացու—Լ. Շ.) պարտությունը նկարագրելուց հետո, կամենալով ցույց տալ Հայաստանում Արշակ Փոքրի թագավորության սկիզբը, իսկ երկրորդ անգամ՝ հայ ու պարսից Արշակունի առաջին մի քանի գահակալներին վերհիշելու առիթով։

Արշակ Փոքրի մասին Անանունի այս վերջին տեղեկությունը հետևյալն է. «Արդ՝ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ... Ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին քաղաքի, եղբարբ իւրով Վաղարշակաւ...»[3]։ Վաղարշակի մասին Անանունի այս տեղեկությունը նախորդ ուսումնասիրողները կամ անտեսել են (պարզապես լռության են մատնել՝ Մ. Էմին, Ն. Ջնտոյան, Ն. Ադոնց, Ստ. Մալխասյան, Բ. Սարգիսյան և ուրիշներ) կամ էլ համարել են Խորենացու ազդեցության հետևանք և հետագա ավելամուծություն բնագրում։ Այս առումով ուշագրավ են հատկապես Պ. Ֆեթթերի և Ն. Մառի ենթադրությունները։

Ըստ Պ. Ֆեթթերի, «Մար-Աբբաս հայոց աշխարհի առաջին Արշակունի արքայն կղնէ Արշակայ Մեծին որդին՝ որ նոյնպէս Արշակ կկոչուէր, իսկ արքայացուցակաց երկրորդն (նկատի ունի հայ Արշակունիների արքայացուցակը—Լ. Շ.) հայ Արշակունեաց նախահայր կկոչէ երկու արքայներ, յիշեալ Արշակն՝ կրտսերն, եւ անոր եղբայրն Վաղարշակ,—յայտնի ապացոյց մը՝ որ թէ Սեբէոսի կից գրութեան հեղինակը կճանչնար Խորենացւոյ պատմագրութիւնն, եւ կշանար Մար-Աբաս Մծուրնացւոյ եւ Մար-Աբբաս Կատինայի մէջ եղած ակնյանդիման հակասութիւնը բառնալ՝ ընդունելով որ գահակից էին անոնք»[4]։ Կամ՝ «Մծուրնացի Մար-Աբբաս ամենեւին չի ճանչնար առաջին հայ Արշակունի Վաղարշակայ անձնաւորութիւնն՝ որուն վրայ Խորենացի յայտնի յօժարութեամբ մը կխօսի, այլ կրտսեր որդի Արշակայ Մեծի»[5]։ Վերջապես, խորհրդածելով Մարաբասյան գրքի պատմությունը հորինողի մասին, Պ. Ֆեթթերը գրում է. «Սակայն որևիցէ պարագային մէջ Մ. Խորենացի մաս մունի այս կեղծիքէն. վասն զի Սեբէոսի Մար-Աբբասը չի ճանչնար զՎաղարշակ, որ ըստ Խորենացւոյ՝ գրքին յօրինման պատճառն եղած է»[6]։

Այսպիսով, ըստ Պ. Ֆեթթերի, Սեբեոսի աշխատությամբ մեզ հայտնի Մար-Աբասը Վաղարշակ չի ճանաչում, որ Վաղարշակին վերաբերող համա-

---

Византийского («Византийский временник», 1901, вып. 1—2, էջ 67 և 83-ի աղյուսակը), Բ. Սարգիսյան, Սիմէոն Ապարանեցին և կեղծ Սեբեոսի առեղծուածը («Բազմավէպ», 1915, էջ 34)։

3 «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 10 (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Լ. Շ.)։

4 «Հայկական աշխատասիրութիւնք հայագետ Պ. Ֆեթթերի», Վիեննա, 1895, էջ 38—39։

5 Նույն տեղում, էջ 41։

6 Նույն տեղում, էջ 45։

պատասխան միտքը, ինչպես նաև դրա հետ կապված հայ Արշակունիների ամբողջ արքայացանկը, դարձյալ ըստ Պ. Ֆեթթերի, բնագրում ավելացվել է հետագայում՝ Մար-Աբաս Կատինայի և Մար-Աբաս Մծուրնացու[7] կամ, մեր այսօրվա պատկերացմամբ, Խորենացու և Անանունի հակասությունը վերացնելու նպատակով։

Գրեթե նույնն է ենթադրել նաև Ն. Մառը «О начальной истории Армении Анонима» հոդվածում։ Այստեղ նա դրում է, որ Անանունի գործի մեզ հասած բնագիրը Խորենացու ազդեցությամբ խիստ տուժել է, որ ժամանակագրությունից զատ այնտեղ հետագայում ավելացվել են նաև առանձին մտքեր, արտահայտություններ։ Իբրև այսպիսի ավելամուծության օրինակ նա նշել է Անանունի «Եղբարբ իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս» միտքը[8]։ Իսկ Մար-Աբասի մասին գրած հոդվածում նա հայտնում է, որ Խորենացին է Անանունի Արշակ Փոքրին Վաղարշակ անվանել[9]։

Վկայակոչված այս ենթադրությունները որևէ փաստով չեն հիմնավորված և անհավանական են տարբեր առումներով։

Նախ անդրադառնանք Ն. Մառի վերջին ենթադրությանը և փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ է Խորենացին Արշակ Փոքրին Վաղարշակ անվանել։ Այս հարցին քիչ թե շատ հավանական պատասխան տալը հնարավոր չէ։ Նախ այն պատճառով, որ կարող ենք ենթադրել նաև հակառակը, ասենք թե՝ Անանունն է Վաղարշակին Արշակ Փոքր անվանել և, բացի այդ, ինչո՞ւ անպայման մտածել, որ մեկ կամ մյուս հեղինակը փոխել են հայ Արշակունի առաջին գահակալի անունը։ Տվյալ դեպքում ինչո՞վ էր Վաղարշակ անունը նախընտրելի Խորենացու համար՝ Արշակ Փոքրի համեմատությամբ, կամ այդ անվանափոխությամբ ի՞նչ նպատակ կարող էր հետապնդել նա, երբ քաջ գիտեր, որ գործ ունի պատմական գործչի, այն էլ մի ամբողջ թագավորական հարստության հիմնադրի հետ։ Թվում է, ոչ միայն Խորենացին, այլև ցանկացած մատենագիր այդպիսի անեպատակ փոփոխություն չէր կատարի, այդքան քմահաճ չէր վարվի պատմական անունների նկատմամբ։

Ավելի քան անհամոզիչ է Անանունի մոտ Վաղարշակի գոյությունը ժխտող ենթադրությունը։ Արդ, մի պահ ընդունենք, որ, իրոք, մեկը Խորենացու և Անանունի կամ, Պ. Ֆեթթերի պատկերացմամբ, երկու Մար-Աբասների հակասությունը վերացնելու նպատակով այդպիսի քայլ է կատարել, որ «եղբարբ իւրով Վաղարշակաւ...» միտքը և դրան առնչվող այլ տվյալներ է մուծել Անանունի բնագիր։

Սակայն, այսպես մտածելու դեպքում խիստ օրինական հարցեր կառաջանան։ Նախ՝ ինչո՞ւ այդ անհայտ հեղինակը այնպես չի վարվել, որ տվյալ հարցում Խորենացու և Անանունի հակասությունները ըստ ամենայնի վերանան (նկատի ունենք այն, որ Խորենացու մոտ Վաղարշակը Արշակ թագավորի եղբայրն է համարված, իսկ Անանունի մոտ՝ որդին), երկրորդ՝ ինչո՞ւ չի ընտրել «հակասությունները» վերացնելու առավել դյուրին ու ապահով միջոց,

---

7 Պ. Ֆեթթերը այն սխալ տեսակետին էր, որ, իբր, Խորենացու հիշատակած Մար-Աբաս Կատինա Մծբնացին և Սեբեոսի աշխատությամբ մեզ հայտնի Մար-Աբաս փիլիսոփա Մծուրնացին տարբեր գործիչներ են (նույն տեղում, էջ 31—45)։

8 H. Marr, Хитон Господень, стр. 282, прим. 1.

9 Նույն տեղում, էջ 086։

որպեսզի կատարած «կեղծիքը» հետագայում աչքի չընկներ, երբ, փաստորեն, այդպիսի միջոց, «հակասությունները» վերացնելու առավել նախընտրելի ուղի կար Անանունի մոտ։

Համոզվելու համար դիմենք Անանունին։ Նկարագրելով պարթևասելևկյան պատերազմների ավարտը, նա անմիջապես շարունակում է. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի»[10]։

Արդ, եթե ինչ-որ մի անհայտ հեղինակ կամենար այս տեղեկությունները (Պ. Ֆեթթերի խոսքը դրանց մասին է) հարմարեցնել Խորենացու հետ, բոլորովին կարիք չէր ունենա նոր տողեր ավելացնելու Անանունի շարադրանքում։ Այսինքն՝ կարիք չէր ունենա նորից հիշատակելու Արշակ Փոքրին, որպեսզի «տեղ բացվեր» Վաղարշակի համար, այլ վկայակոչված նախադասության «զորդի իւր զԱրշակ փոքր կոչեցեալ» արտահայտության փոխարեն կգրեր՝ «զեղբայր իւր զՎաղարշակ» և դրանով իր նպատակին հասած կլիներ։

Այս փոքրիկ փոփոխություններով անհայտ հեղինակը ոչ միայն Անանունի և Խորենացու վկայությունները կհարմարեցներ իրար և կխուսափեր անհարկի ավելամուծություններից, այլև իրեն զերծ կպահեր մեղադրանքից, քանի որ ոչ մի հրաշքով հետագայում կռահել չէր լինի, թե Անանունի բնագրում որևէ փոփոխություն է կատարվել կամ այնտեղ Արշակ Փոքր է հիշատակված եղել։

Վկայակոչված ենթադրությունների անհավանականությունը մի կողմից, մյուս կողմից էլ Անանունի և Խորենացու համապատասխան տեղեկությունների համակողմանի քննությունը, որին քիչ հետո կանդրադառնանք, բերում են այն համոզման, որ Անանունի շարադրանքում Վաղարշակին վերաբերող տեղեկությունը ճետագա ավելամուծություն չէ, որ չի կարելի այն անտեսել կամ դուրս նետել բնագրից։ Ավելին, ինչպես կտեսնենք, հենց այդ տեղեկության օգնությամբ պետք է բացահայտել Անանունի և Խորենացու կարծեցյալ հակասությունների պատճառները, որոնք անցյալում անհաշտելի են համարվել։

Ասում ենք կարծեցյալ, քանի որ Խորենացու և Անանունի միջև նկատվող այդ «հակասությունները» արգասիք են միևնույն աղբյուրի նկատմամբ հեղինակների տարբեր մոտեցման՝ էականը, գլխավորը երկրորդականից զանազանելու նրանց սկզբունքի և ունակության։

Որպեսզի մեր խոսքը լոկ հայտարարության բնույթ չկրի, մի փոքր ավելի հանգամանորեն անդրադառնանք Խորենացու և Անանունի տեղեկություններին և տեսնենք, թե ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս և ի՞նչ պարագաներում է տեղի ունեցել Վաղարշակի կամ Արշակ Փոքրի թագադրումը Հայաստանում։

Այսպես, խոսելով Պարթև երրորդ գահակալ Արշակ Մեծի գործունեության մասին, Խորենացին գրում է. «Զսա (խոսքը Պարթև երկրորդ գահակալ Արտաշեսի մասին է—Լ. Շ.) պայազատէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ Մեծ. պատերազմի ընդ Դեմետրեայ և որդւոյն Դեմետրեայ Անտիգոնեայ. քանզի ի վերայ նորա եկն ի Բաբելովն մակեդոնական զօրու, և պատերազմեալ՝ ի գերութիւն ըմբռնեցաւ. զոր կալեալ Արշակայ՝ տարաւ ի Պարթևս հանդերձ երկաթեղէն կապանօք, ուստի և Սիրիպինդէսն կոչէցաւ։ Այլ իմացեալ եղբօր նորին Սիդիացւոյ Անտիոքայ զգնալն Արշակայ՝ գայ ունի զԱսորիս։ Իսկ Ար-

10 Մեքենս, էջ 9։

շակայ հրկոտասան բիւրու անդրէն զարձեալ, և Անտիոքոս ի սաստիկ ձմեռայնոյն հերքեալ՝ պատահի նմա պատերազմաւ յանձուկ տեղիս, և կորնչի հանդերձ զօրօքն. և Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս...»[11]։ Այնուհետև Խորենացին շարունակում է. «Ի ժամանակին յայնմիկ (նկատի ունի Անտիոքոս Սիդեացու պարտության ժամանակը—Լ. Շ.) թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ աշխարհիս Հայոց, զհիւսիսի և զարևմուտս տալով նմա սահմանս»[12]։

Հայաստանում Արշակունիների հարստության հիմնադրմանը նախորդող այս նույն դեպքերը ավելի հանգամանորեն ավանդել է նաև Անանունը, որի աղբյուրը նույն Մարաբասյան մատյանն է. ըստ նրա «Եւ եղև յետ մահուանն Աղեքսանդրու կայսեր Մակեդոնացւոց ծառայեցին Պարթևք Մակեդոնացւոց ամս ԿԱ (61)։ Քանզի թագաւորեաց Սեղևկիոս Նիանովր ի Բաբելոն ամս ԼԸ (հասկանալ՝ ԼԲ (32)[13]։ Անտիոքոս Սոտեր՝ ամս ԺԲ (19)։ Անտիոքոս Թէոս՝ ամս Ժ (10)։

Եւ յամի մետասաներորդի Անտիոքայ արքայի ապստամբեալ ի բաց կացին Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոց։ Եւ թագաւորեաց Արշակ Մեծ, որդի արքային Թէտալացւոց, ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց...

Եւ եղև յամին ճարիւր և տասներորդի չորրորդի Արշակայ արքայի Պարթևաց, ի չորրորդում ամի թագաւորութեան Դեմետրեայ ի վերայ Ասիաստանի և Ասորւոց, մինչ Արշակ արքայ գնաց յարևելս՝ զաւրաժողով լեալ և Դեմետրիոս չոգաւ կալաւ զԲաբելոն։

Եւ իբրև ետես Դեմետրիոս, զի այնչափ բազմութեամբ եկն եհաս ի վերայ նորա Արշակ՝ տեղի ետ նմա և գնաց մինչև ցԱնտիոք. և անդ ճակատեցաւ ընդդէմ Արշակայ ի պատերազմ։ Եւ եղև պատերազմ մեծ առ Անտիոք քաղաքաւ։ Հարկանեն և սրբաջունջ առնեն զզաւրն Դեմետրեայ. և ձերբակալ առնեն զԴեմետրիոս։ Կապէ զնա Արշակ արքայ ոտիւք և ձեռաւք, և առնու գնայ յարևելս ի Բահլ Շահաստան։

Իբրև ետես Անտիոքոս եղբայր Դեմետրեայ, եթէ ըմբռնեցաւ Դեմետրիոս ի ձեռս Արշակայ արքայի՝ ինքն թագաւորէ ի վերայ Ասորւոց և Ասիաստանի. զաւրաժողով լինի և գնայ ի Բաբելոն, զկնի տասն ամի։ Ազդ լինի սորին, եթէ թագաւորեաց Անտիոքոս եղբայր Դեմետրեայ և եկն ի Բաբելոն։

Լուծանէ Արշակ զԴեմետրիոս զկնի տասն ամի և արձակէ առ եղբայրն, որպէս զի խաւսեսցի ինչ առնել նմա. և Դեմետրիոս ոչ գնաց առ եղբայրն իւր ի Բաբելոն, այլ յԱսիաստան անցանէ։ Ապա խաղայ գնայ Արշակ ի Բաբելոն երեքտասան բիւրովք։

Յամի ճարիւրերորդի քսաներորդի ութերորդի թագաւորութեան իւրոյ իբրև մաւտ եղև ի Բաբելոն՝ անկանի ի վերայ նորա Անտիոքոս յանկարծակի ի ձմեռն ժամանակի՝ ի նեղ վայրի։ Եւ ոչ կարեն զաւրել. սպառեն զզաւրն. զարկանեն և ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ և սպանանեն. և ձերբակալ առնեն զՍելևկիոս զորդին Անտիոքայ, զոր ունէր. ասէ. արքայ ի դրանն իւրում թագաւորութեան։

---

11 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց». Տփղիս, 1913, էջ 103—104։

12 Նույն տեղում, էջ 104։

13 Լ. Շահինյան, Ո՞րն է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը («Բանբեր Մատենադարանի», 1967, № 5, էջ 28, ծան. 16)։

Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի»[14]։

Ինչպես երևում է, Խորենացին ու Անանունը վերոհիշյալ դեպքերի նկարագրությամբ իրար ամենևին չեն հակասում։ Նույն դեպքերը Անանունը նկարագրել է առավել հանգամանորեն, անգամ որոշ մանրամասներով՝ ժամանակագրական, փաստական, իսկ Խորենացին բավարարվել է համառոտ շարադրանքով, նյութից զատելով հիմնականը։

Բացի այս, թե՛ Խորենացին, և թե՛ Անանունը հայ Արշակունի առաջին գահակալի նստավայր են համարում Մծբին քաղաքը[15], նրանց միջև չկան նաև ժամանակագրական տարաձայնություններ։ Օրինակ, ինչպես ցույց ենք տվել մեկ այլ առիթով[16], ըստ Խորենացու Անտիոքոս Սիդեացու սպանությունը և Վաղարշակի թագադրումը տեղի են ունեցել մ. թ. ա. 134 թ., որը նշում է նաև Անանունը՝ Արշակ Փոքրի համար։

Սակայն, նախքան Անանունի ժամանակագրական տեղեկություններին անդրադառնալը, հարկ է նկատել, որ դրանցից մեկն ու մեկը հետագայում փոփոխվել է։ Օրինակ, անհավանական է, որ Արշակ Մեծի թագավորության 114-րդ տարում թագավորած արքան (Անտիոքոս Սիդեացին), որին նույն հեղինակը հատկացրել է ընդամենը 10-ամյա թագավորության ժամանակաշրջան, մահանար միևնույն արքայի գահակալության 128-րդ տարում։ Անանունի մոտ փաստորեն առկա է 4-ամյա անհամաձայնություն և դժվար թե այդպես լիներ նրա աշխատության բնագրում։

Վերոհիշյալ վկայություններից մեկն ու մեկի փոփոխված լինելու փաստն անառարկելի համարելով հանդերձ, կարևոր է իմանալ, թե որն է ենթարկվել փոփոխության։ Դիմենք հարցալուծման հետևյալ միջոցներին։ ա) Եթե փոփոխված համարենք Անտիոքոս Սիդեացու գահատարիքը՝ 10-ի փոխարեն ընդունենք 14 տարի, իրավ է, կվերանա հակասությունը, սակայն ստիպված կլինենք 4 տարով էլ ավելացնել Դեմետրիոսի գերության տևողությունը։ Այսպիսով, փոփոխված պետք է համարենք Անանունի ոչ թե մեկ, այլ երկու տեղեկություն, որը քիչ հավանական է։ Բացի այդ, դրանով մենք սխալեցրած կլինենք Անանունին, քանի որ օտար աղբյուրները նույնպես Անտիոքոս Սիդեացուն տալիս են 9—10 տարվա թագավորություն, նույնքան տարի էլ հաշվում են Դեմետրիոսի գերությունը[17]։

բ) Այժմ էլ ենթադրենք, որ փոփոխվել է Անանունի նախավերջին տեղեկությունը՝ փոխարեն 128-րդի ընդունենք 124-րդ։ Այս դեպքում արդեն պետք է փոխել նաև վերջինը, որին կանդրադառնանք, 129-րդի փոխարեն ընդունենք Արշակի թագավորության 125-րդ տարին։ Դարձյալ առաջարկվելու է երկու փոփոխություն, որը նույնպես քիչ հավանական է։

գ) Իսկ եթե փոփոխված համարենք Անանունի առաջին տեղեկությունը՝ փոխարեն Արշակի թագավորության 114-րդի հասկանանք 118-րդ, ապա առաջարկվելու է միայն մեկ փոփոխություն, որն առավել հավանական է։ Ուրեմն

---

14 Սեբեոս, էջ 7—9։

15 Խորենացի, էջ 28, 31, 109, 118, 144։

16 «Բանբեր Մատենադարանի», 1967, № 8, էջ 39—41։

17 Եվսեբիոս Կեսարացի, Ժամանակագրություն, Ա մաս, Վենետիկ, 1818, էջ 350, 358, Բ մաս, Վենետիկ, 1818, էջ 35, 244։

«հարիւրեռորդի տասներորդի չորորդի» փոխարեն, բնագրում եղել է «հարիւրեռորդի տասներորդի ութերորդի», որպիսի փոփոխություն հնարավոր է։

Սա դեռ բոլորը չէ։ Անանունի տեղեկությունները մեկնաբանելու համար անհրաժեշտ է պարզաբանել նաև մեկ ուրիշ հարց։ Ի՞նչ նկատի ունի հեղինակը Արշակի թագավորության 118-րդ, 128-րդ կամ, ինչպես կտեսնենք, 129-րդ տարիները նշելիս։ Արդյո՞ք այս տեղեկությունները վերաբերում են Արշակ Մեծի թագավորությանը։

Հարցին պատասխանելու առաջին հնարավորությունը մեզ ընձեռում է ինքը՝ հեղինակը։ Հակառակ վերոհիշյալ տեղեկությունների, երբ Անանունը հաջորդաբար հիշատակում է Պարթև Արշակունիներին, Արշակ Մեծին հատկացնում է ընդամենը 56-ամյա թագավորության ժամանակաշրջան, 129 կամ ավելի տալու փոխարեն։ Բնական է, որ ընդամենը 56 տարի թագավորած արքան չէր կարող ունենալ թագավորության 118, 128, կամ 129-րդ տարի։

Վերջապես, Անանունի սկզբնաղբյուրը (Մարաբասյան մատյան), որից օգտվել է նաև Խորենացին, Արշակ Մեծին հատկացրել է 52-ամյա թագավորության ժամանակաշրջան, որով կասկածի է ենթարկվում նույն արքային Անանունի տված անգամ 56 տարին, էլ ուր մնաց 118, 128, 129 կամ ավելի տարի թագավորած լինելը, որը շատ անհավանական է։

Այս հարցի պատասխանը փնտրելիս, հավանական ենք համարում Ք. Պատկանյանի տեսակետը[18], որի համաձայն Արշակ Մեծի թագավորության հիշյալ տարիների ներքո պետք է հասկանալ Պարթև Արշակունի թագավորական հարստության տարիները՝ սկսած հիմնադրման թվականից, որը, ինչպես ցույց ենք տվել այլ առիթով, 262-ն է մ. թ. ա.[19]։ Այսպիսով, եթե այդ հարստության 118-րդ տարին հաշվենք մ. թ. ա. 262-ից, կունենանք մ. թ. ա. 145 (262—117=145), որը համարելու ենք Դեմետրիոսի գերության և Անտիոքոս Սիդեացու թագադրման տարեթիվ՝ ըստ Անանունի։ Այստեղից էլ պարզ է, որ Անտիոքոս Սիդեացու սպանությունն ու Արշակ Փոքրի գահակալումը դրվելու են մ. թ. ա. 135-ին (262—127=135), իսկ Անանունի մյուս վկայությամբ, ուր նշված է Արշակ Մեծի 129-րդ տարին, կունենանք ճիշտ մ. թ. ա. 134 թ. (262—128=134)։

Սա դեռ մեզ հետաքրքրող հարցի լուծումը չէ։ Ի վերջո այսքան նմանություններով հանդերձ, ինչպե՞ս է, որ Անանունի մոտ հիմնադիրը Արշակ Փոքրն է՝ Արշակ Մեծի որդին, իսկ Խորենացու մոտ Վաղարշակը՝ Արշակ Մեծի եղբայրը։

Հարցին հավանական պատասխան տալուն դարձյալ օգնում է Անանունը։ Վերը բերված տեղեկություններից հետո, երբ Անանունը թվարկում է նախ Պարթև, իսկ հետո էլ հայ Արշակունիներին, երկրորդ անգամ գրում է.

«Եւ այս են թագաւորք Արշակունիք, որք թագաւորեցին Հայաստան երկրի զկնի Արշակայ Մեծի։

---

18 К. Патканов. Материалы для армянского словаря, вып. II, Петербург. 1884, стр. 62—63. Այս տեսակետը հետագայում պաշտպանել է Ն. Ադոնցը՝ «Начальная история Армении» գործում («Византийский временник», 1901, вып. 1—2, прим. 2, стр. 84), ինչպես նաև Գ. Սարգսյանը («Մ. Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը», Երևան, 1965, էջ 35, տողատակ)։

19 «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 155—172։

Արդ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝ յամի հարիւրերորդի քսան և ինն երորդի թագաւորութեանն Արշակայ հաւր իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին քաղաքի, եղբարբ իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս՝ ամս ԽԲ (42)»[20]։

Այժմ ուշադրություն հրավիրենք Անանունի այս վերջին մտքերի վրա։ Ինչպես տեսնում ենք, Արշակ Փոքրը միայնակ չի կառավարել Հայաստանում, այլ՝ «եղբարբ իւրով Վաղարշակաւ»։ Բացի այս, կարևոր է հատկապես հաջորդ միտքը՝ «...զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս...»։

Արդ, ո՞վ, ո՞ւմ թագավորեցրեց։ Անանունի բնագրից պարզ երևում է, որ Արշակ Փոքրը Հայաստանում թագավորեցրեց Վաղարշակին։

Իսկ ի՞նչ եղավ ինքը՝ Արշակ Փոքրը։ Այս հարցի պատասխանը դժվարություն չի հարուցում։ Եթե Արշակ Փոքրը կամովին հրաժարվել է Հայաստանի գահից և իրավունք է ունեցել եղբորը այնտեղ թագավոր վերահաստատելու, ուրեմն ենթադրելի է, որ հայրը չկար, ինքն էր պարթևական պետության տիրակալը։

Այսպիսով, ըստ Անանունի, Արշակ Փոքրն ու Վաղարշակը համատեղ թագավոր են նշանակվել Հայաստանում, ապա, ինչ-որ ժամանակ թագավորելուց հետո (այդ չի երևում Անանունի շարադրանքից, իսկ Խորենացու տվյալներով 12-ամյա համատեղ թագավորությունից հետո), երբ մահացել է Արշակ Մեծը՝ երկու եղբայրների հայրը, Արշակ Փոքրը վերադարձել է հոր գահը գրավելու՝ թերևս որպես ավագ որդի, իր եղբորը՝ Վաղարշակին, վերահաստատելով Հայաստանի թագավոր։

Անանունի մոտ առկա են նաև այս բանը հաստատող ուրիշ տեղեկություններ։ Այսպես, ավարտելով խոսքը Արշակ Մեծի գործունեության մասին, նա գրում է. «Եւ լինին ամենայն ամք Արշակայ կենաց իւրոց ՃԼ (130) ամ. և թագաւորեաց ամս յիսուն և վեց։ Զկնի նորա թագաւորէ որդի նորա Արշակ ի վերայ Պարթևաց ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց՝ ամս Հ (70)»[21]։

Անանունի այս տեղեկությունը ուշագրավ է տարբեր առումներով։

Նախ, ըստ նրա, Արշակ Մեծին հաջորդել է Արշակ անունով որդին, որը վերը քննարկված փաստի թելադրանքով չի կարող ուրիշ Արշակ լինել, քան Արշակ Փոքրը և, բացի այդ, անհավանական կլիներ ենթադրել, թե Արշակ Մեծը Արշակ անունով երկու որդի է ունեցել։

Երկրորդ, Անանունը կարծեք թե հատուկ նպատակով նշել է Արշակ Մեծի հաջորդ Արշակի թագավորանիստ վայրը և դրանով նրան տարբերակել պարթևական հետագա բոլոր գահակալներից։ Այս տարբերակումն ակնհայտ է դառնում, երբ ծանոթանում ենք հեղինակի նախորդ պարբերության շարադրանքին։ «Եւ այս են իշխանք Պարթևաց,— գրում է Անանունը,— որք թագաւորեցինն զկնի Արշակայ հաւր իւրեանց ի Բահլ Շահաստան յերկիրն Քուշանաց»[22]։

Ինչպես տեսնում ենք, Անանունը արդեն ասել է, թե պարթևական թագավորների մայրաքաղաքը որն էր և որտեղ էր գտնվում։ Ուրեմն, նույն մտքի

---

20 Մեքենոս, էջ 10։ Անանունի մոտ Վաղարշակի համար նշված ԽԲ (42) տարին գրչական վրիպակ է՝ Ի և Խ տառերի շատ սովորական շփոթի արդյունք, որը պետք է սրբագրել ըստ Խորենացու և կարդալ ԻԲ (22)։

21 Մեքենոս, էջ 10։

22 Նույն տեղում։

կրկնությունը, այն էլ անմիջապես՝ հաջորդ պարբերության մեջ, շարադրանքի առումով միանգամայն ավելորդ էր։ Անհարկի այս կրկնությունը Անանունի համար ունեցել է խիստ կարևոր նշանակություն։ Մեր կարծիքով, Անանունը կամեցել է ընթերցողին ետ պահել հնարավոր սխալից, ասել, որ Արշակ Մեծի որդի Արշակի համար իր նշած գահատարիքը (առայժմ էական չէ, թե բնագրում ինչ է եղել՝ «Հ (70) ամ», թե մի ուրիշ բան) նրա պարթևական կամ բուն թագավորությանն է վերաբերում։ Հենց դրա համար է, որ նա այս Արշակին տարբերակելով մնացած բոլորից, գրել է. «Զկնի նորա (Արշակ Մեծից հետո.—Լ. Շ.) թագաւորէ որդի նորա Արշակ ի վերայ Պարթևաց ի Բանել Նահաստանի յերկիրն Քուշանաց՝ ամս Հ (70)»։ Իսկ մյուսներին հենց այնպես թվարկել է. «Ապա որդի նորա Աշնաշ՝ ամս ԼԲ։ Ապա Արշէն՝ ԻԲ» և այլն[23], այլապես, ընթերցողը կարող էր Արշակի նշված գահատարիքի մեջ նկատի ունենալ նաև նրա ոչ պարթևական գահակալությունը։ Այսինքն այն, որ Արշակ Մեծի որդի Արշակը թագավոր նշանակվեց Հայաստանում՝ «եղբարբ իւրով Վաղարշակաւ...»։

Ահա, մեր կարծիքով, սկզբնաղբյուրի այս մանրամասնությունն է, որ Խորենացին անտեսել է, նկատի ունենալով, որ այն հայ ժողովրդի պատմության համար այնքան էլ կարևոր չէ։ Նախ այն պատճառով, որ Արշակ Փոքրը, ինչպես տեսանք, Վաղարշակի հետ է թագավորել Հայաստանում և, բացի այդ, Վաղարշակն է շարունակել հայոց թագավորությունն ու դարձել հայ Արշակունիների թագավորական հարստության հիմնադիրը։

Սակայն Խորենացին Արշակ Փոքրին չի անտեսել ընդհանրապես։ Բավարար հիմքեր կան մտածելու, որ Անանունի հիշատակած Արշակ Փոքրը, որը հետո՝ իր բուն կամ պարթևական գահակալության ժամանակ դադարել է «Փոքր» կոչվելուց և նույն հեղինակի մոտ կոչվում է սոսկ Արշակ, Խորենացու նշած պարթև չորրորդ գահակալ Արշականն է։ Այդ են ապացուցում հետևյալ հանգամանքները։

1) Խորենացու մոտ Արշականը Արշակ Մեծի որդին է և անմիջական հաջորդը[24], ինչպես էր Արշակ Փոքրը կամ Արշակը Անանունի մոտ։

2) Անանունի և Խորենացու պարթևական արքայացանկերը բացահայտորեն նման են՝ սկսած երրորդ գահակալ Արշակ Մեծից. այն է՝ գահակալների անունների համարյա նույնություն, նույնանման հաջորդական կարգ և այլն։

3) Ինչպես երևում է, Խորենացու ավանդած պարթևական արքայացանկում չորրորդ և հինգերորդ գահակալների անունների տարբերությունը աննշան է, որը և պատճառ է դարձել դրանց միմյանցով շփոթելուն։ Օրինակ, առանձին ձեռագրերում Արշանակը կրում է Արշական անունը[25], որը ենթադրել է տալիս հակառակ փոփոխություն, Արշականը՝ Արշանակ։ Այսպիսով, Արշակ Մեծի հաջորդը Խորենացու մոտ կարող է ունեցած լինել Արշանակ անունը, որը կազմված է հայերենի ակ փոքրացուցիչ վերջածանցով և նշանակում է փոքր Արշան կամ Արշակ, ինչպես Հայկ-Հայկակ, ձոր-ձորակ, գետ-գետակ և այլն։

---

23 Սեբեոս, էջ 16։

24 Խորենացի, էջ 204։

25 Խորենացի, էջ 204-ի վերևից 7-րդ տողի Արշանակ անվան ձեռագրային տարբերակը։

Այսպիսով, հիմնական հարցերում Խորենացին և Անանունը իրար ամենևին չեն հակասում։ Ինչպես Խորենացին, այնպես էլ Անանունը Հայաստանում Արշակունիների թագավորության հիմնադիր են համարում Վաղարշակին, երկուսի մոտ էլ Վաղարշակի թագավորության սկիզբ է համարված մ. թ. ա.

Ըստ Անանունի (Սեբեոս, էջ 10)			Ըստ Խորենացու (գիրք Բ, գլ. ԿԸ, ԿԹ)			
Հաջորդական թվակի գրությունը	Անունները	Գահատարիքը	Հաջորդական թվակի գրությունը	Անունները	Գահատարիքը	
					Կ ա	Պետ. ՀՄՍՀ ԳԱ
3	Արշակ Մեծ	56	3	Արշակ Մեծ	53	52
4	Արշակ	Հ (70)	4	Արշական	30	50
5	Աշնաշ	ԼԲ (32)	5	Արշանակ	31	32
6	Արշէն	ԻԲ (22)	6	Արշէզ	20	20
7	Արշաւիր	ԽԵ (45)	7	Արշաւիր	46	46
8	Արտաշէս	ԼԴ (34)	8	Արտաշես	34/33	33
9	Դարեհ	Լ (30)	9	Դարեհ	30	30
10	Արշակ	ԺԷ (17)	10	Արշակ	19	17
11	Արտաշիր	ԽԶ (46)	11	Արտաշէս	20	20
12	Պերոզ	ԿԴ (64)	12	Պերոզ	34/33	33
13	Վաղարշակ	Ծ (50)	13	Վաղարշ	50	50
14	Արտաւան	ԼԶ (36)	14	Արտաւան	31	36

134 թ., թե՛ մեկը, և թե՛ մյուսը Վաղարշակին հատկացրել են ԻԲ (22)-ամյա թագավորության ժամանակաշրջան և, վերջապես, Անանունի ու Խորենացու համապատասխան տեղեկությունների համատեղ քննությունից պարզվում է, թե ով էր Արշակ Փոքր կոչվածը և ինչքանով է նա առնչվում հայ ժողովրդի պատմության հետ։

Այսուհանդերձ, Խորենացու և Անանունի հիշյալ տեղեկություններին անդրադառնալիս, բացատրելի է մնում նաև հետևյալը՝ ինչո՞ւ Անանունը Վաղարշակին Արշակ Մեծի որդի է համարել, իսկ Խորենացին՝ եղբայր, և՝ ո՞վ է նրանցից արժանահավատը, ավելի ճիշտ, տվյալ դեպքում ո՞վ է հարազատ մնացել Մարաբասյան մատյանի տեղեկությանը։

Հավանական է թվում, որ վերջին հարցում նախապատվությունը պետք է տալ Անանունին, քանի որ համապատասխան փաստերի վերլուծությունը այդ է թելադրում։ Վերևում տեսանք, որ Անանունի հիշատակած Արշակ Փոքրը նույնանում է Խորենացու՝ Արշականի հետ, տեսանք նաև, որ և՛ Անանունը, և՛ Խորենացին Արշակ Փոքրին կամ Արշականին Արշակ Մեծի որդի են համարել, ուստի, բնական է, որ Վաղարշակը նույնպես Արշակ Մեծի որդին է լինելու[26], ինչպես Անանունի մոտ է։

26 Այսպես՝ Արշակ Փոքր=Արշական, Արշակ Փոքր կամ Արշական՝ որդի Արշակ Մեծի. Վաղարշակ եղբայր Արշակ Փոքրի (կամ Արշականի). Վաղարշակ որդի Արշակ Մեծի։

Սույն ենթադրությունը հաստատվում է նաև Վարդան պատմիչի հետևյալ վկայությամբ. «Բայց լուաք և տեսաք գրով, եթէ որդի էր սա (Վաղարշակը—Լ. Շ.) Արշակայ Մեծի՝ և ոչ եղբայր։ Եւ էր բանն այսպիսի—«Եթէ թագաւորն Պարսից խնդրեաց զսիւնն կճեայ, որ ի Մծբին յապարանս արքայութեան Հայոց. և ի յառնուլն՝ գտաւ գիր յունարէն, եթէ «Ես գրեցի Ագաթանգեղս, զի Մեծն Արշակ ունէր չորս որդիս.— զառաջինն թագաւորեցոյց Թետալացւոց և զերկրորդն Լիրիկացւոց և զերրորդն Պարթևաց և զչորրորդն Հայոց՝ տալով նմա զսահմանն, զոր Հայկն ստացաւ. զաւակօքն իւրովք և որդւովք նօթն դստերաց իւրոց»[27]։

Վարդանի այս վկայությունը առանձնակի նշանակություն է ստանում, երբ նկատի է առնվում Խորենացու անկասկածելի հեղինակությունը միջնադարյան հայ մատենագիրների համար։ Ինչպես հայտնի է, Խորենացուն հաջորդած հայ բոլոր մատենագիրները, որոնք անդրադարձել են հայ ժողովրդի հնագույն և հին շրջանի պատմությանը, մեծարել են Խորենացուն, համարել են դերճշմարտապատում, ըստ ամենայնի հավատացել և համարյա տառացի ընդօրինակել են նրա ավանդած տեղեկությունները։ Այլ կերպ ասած սիրով և մեծագույն ակնածանքով վերակրկնել են նրան, ինչպես վարվել է նաև Վարդանը[28]։

Ավելին, Վարդանի ակնածանքը Խորենացու նկատմամբ առավել ցայտուն է երևում, երբ ծանոթանում ենք Վաղարշակի առթիվ նրա շարադրանքին։ Պարզվում է, փաստորեն, որ նա համառոտել ու վերապատմել է Վաղարշակի գործունեությունը՝ միմիայն ըստ Խորենացու, անգամ չի խորշել հայտնել, որ Արշակ Մեծը «...թագաւորեցուցանէ զեղբայր իւր՝ զՎաղարշակ, ի վերայ Հայոց...»[29]։ Ուշագրավ է հատկապես, որ այս տեղեկությունը բերված է նրա պատմության տվյալ հատվածի բուն շարադրանքի հենց սկզբում, որին հաջորդում է Վաղարշակի գործունեության նկարագրությունը։ Այս բոլորից հետո է միայն՝ Վաղարշակին վերաբերող հատվածի նախավերջին պարբերության մեջ, որ Վարդանը մի տեսակ երկյուղածությամբ, որպես միջանկյալ միտք կամ ծանոթագրություն, ավելացնում է. «Բայց լուաք և տեսաք գրով, եթէ որդի էր սա (Վաղարշակը—Լ. Շ.) Արշակ Մեծի՝ և ոչ եղբայր» և այլն, կամենալով ասել, որ չնայած Վաղարշակի ծագումը ներկայացրեց ըստ Խորենացու, սակայն համոզված չէ դրանում։

Վերաբերմունքի այս երկվությունը՝ մի կողմից ըստ Խորենացու պատմելը, մյուս կողմից էլ նրան հակադրվելը, բերում է այն համոզման, որ Վարդանը տվյալ դեպքում լուրջ հիմք է ունեցել Խորենացուն չհավատալու։ Այդ հիմքը, ինչպես վկայում է հեղինակը, «Ագաթանգեղյան» արձանագրությունն է, որից իր ժամանակին օգտվել է նաև Անանունը, և որի հաղորդումը Վաղարշակի մասին նա առավել գերադասելի է համարել քան Խորենացունը։ Ի դեպ, դժվար է ենթադրել, թե Վարդանը Անանունի միջոցով կարող էր Վաղարշակին Արշակ Մեծի որդի համարել։ Թեկուզ այն պատճառով, որ Վարդանի համար Անանունը ոչնչով գերադասելի չէր Խորենացու համեմատությամբ։ Եթե Անանունի նկատմամբ նրա վերաբերմունքը մեզ հայտնի չէ, ապա, ինչպես

27 Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 46։
28 Նույն տեղում, էջ 44—74։
29 Նույն տեղում, էջ 44։

տեսանք, Խորենացու հանդեպ նրա երկյուղածությունն ու հավատը խիստ ակնբախ է։ Ուրեմն, նա առանց օժանդակ և առավել վստահելի սկզբնաղբյուրի չէր կարող հակադրվել Խորենացուն և սոսկ Անանունի միջոցով կասկածի տակ չէր դնի նրա տեղեկությունը։

Այսպիսով, բավարար հիմքեր կան համոզվելու, որ Անանունն ու Վարդանը իրարից անկախ օգտվել են «Ագաթանգեղյան» արձանագրությունից, որի համաձայն Վաղարշակը Արշակ Մեծի որդի է համարվել։ Եվ քանի որ այս բանը երևաց նաև Անանունի և Խորենացու տեղեկությունների համատեղ քննությունից, ուստի անհավանական չէ տվյալ հարցում նախադաս համարել «Ագաթանգեղյան» արձանագրության վկայությունը։

Մեզ հետաքրքրող վերջին հարցը, թե ինչո՞ւ է միևնույն սկզբնաղբյուրի հիման վրա Անանունը Վաղարշակին որդի համարել, իսկ Խորենացին եղբայր, որը, թերևս, միակ անլուծելի հակասությունն է նրանց միջև, առայժմ մնում է բացատրության կարոտ։

ОСНОВАТЕЛЬ ЦАРСТВА АРМЯНСКИХ АРШАКИДОВ ПО АНАНУНИ И МОВСЕСУ ХОРЕНАЦИ

ЛЕВОН ШАГИНЯН

Резюме

Согласно Хоренаци, основателем царства Аршакидов был Вагаршак. В противовес Хоренаци Ананун (Безымянный, автор части произведения Марабаса у Себеоса) основателем этого царства считает Аршака Младшего. Однако это противоречие оказывается мнимым, ибо и Хоренаци, и Ананун в конечном итоге основателем царства считают Вагаршака. Аршак же Младший был соправителем Вагаршака, а затем, после 12 лет совместного царствования занял парфянский престол.